ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ժողովածուն ընդգրկում է 2023 թ. հունիսի 10-11-ը Գավառի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետում կազմակերպված «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի զեկույցները: Հայ բանագիտական միտքը տասնամյակների ընթացքում անգնահատելի ծառայություն է մատուցել հայագիտությանը՝ ազգային էպոսի առասպելական շերտերը քննելու, դրա բովանդակության և պոետիկայի առանձին կողմերը բացահայտելու, այլ ժողովուրդների էպիկական երկերի և «Սասնա ծռեր»-ի միջև եղած ընդհանրությունները բացահայտելու առումով: Այդ աշխատանքները շարունակվում են և այսօր: Այսուհանդերձ, էպոսի շատ կողմեր, հատկապես առասպելաբանականը, դեռևս ամբողջությամբ բացահայտված չեն: Հիմնականում ձևավորվելով միջնադարում, այն իր մեջ ներառել է դեռևս արխաիկ շրջանում ձևավորված էպիկական երկերի ձեռքբերումները: Արդյունքում էպոսը պատմական ժամանակից անցում է կատարել էպիկական ժամանակին՝ ներառելով առասպելականն ու նոր ժամանակների պատմական իրադարձություններից ածանցված գեղարվեստական ընկալումները:

Էպոսների առասպելաբանական քննության կողքին այսօր կարևոր են դրանց փիլիսոփայական, մշակութաբանական, գրականագիտական, քաղաքական, լեզվական խնդիրները: Այս ամենը ենթադրում է, չանտեսելով համեմատական գրականագիտության ձեռքբերումները, խոսել այնպիսի խնդիրների, հարցադրումների մասին, որոնց վերաբերյալ բանագետներ քիչ են խոսել կամ չեն խոսել ընդհանրապես:

Զեկույցների գերակշիռ մասը վերաբերում է հայ և եվրոպական էպոսների համատեղ քննությանը: Անկախ այն հանգամանքից՝ հարցադրումները ընդհանուր-փիլիսոփայական, մշակութաբանական, քաղաքական, թե մասնավոր բնույթի են, միևնույնն է՝ քննվում են ինչպես եվրոպական, այնպես էլ դասական էպիկական երկերի, համաշխարհային առասպելաբանության համատեքստում («Արևելքը «Սասնա ծռեր»

էպոսում», «Կերակրի սեմանտիկան և միֆաէպիկական ավանդույթը», «Սասնայ Ծռեր դիւցազնավէպին քաղաքական ընկալումները», «Նմանակ-երկվորյակների արքետիպի զուգահեռները համաշխարհային առասպելաբանության մեջ և «Սասնա ծռերում», «Հացահատիկի խորհրդաբանությունը Միհր-Քրիստոս-Փոքր Միհր առնչության համատեքստում», «Միհրի աստվածային դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում», «Բեռվուլֆ և Սասունցի Դավիթ»), իսկ եթե խոսքը վերաբերում է էպոսում եղած առանձին երևույթներին, ապա դրա քննությունը տարվում է հայ գրականության առնչությունների համատեքստում («Արայան (Փոքրմհերյան) արքետիպի արտահայտությունը Հր. Մաթևոսյանի ստեղծագործության մեջ», «Հացն ու գինին, տեր կենդանին» բանաձևից մինչև «Հաւատով խոստովանիմ». Ներսես Շնորհալին ու «Սասնա ծռեր» էպոսը», «Ժառանգականության հիմնախնդիրը «Սասնա ծռեր» էպոսում»):

Զեկույցների մի մասը նվիրված է էպոսի լեզվական առանձնահատկություններին, սկսած խոսքի՝ որպես աստվածային շնորհի վերաբերյալ վերլուծություններից («Խոսքի պաշտամունքի և բանաստեղծի՝ որպես քուրմ-ծիսարարի առասպելական ընկալումների շուրջ») մինչև «Սասնա ծռեր» էպոսի առանձին տարբերակների լեզվամտածողության դրսևորումները կամ բարբառային իրողությունների ու այլ հարցերի վերլուծությունները:

Ելույթների մի մասն էլ առնչվում է բանահյուսական առանձին ժանրերին, որոնք կարևոր են բանահյուսական խնդիրների առաջադրման իմաստով («Քյոռօղլի» էպոսի արցախյան տարբերակները», «Հայ ժողովրդական շուտասելուկներ…»):

Ժողովածուն նախատեսված է բանագետների, բանասերների, գրականության հարցերով հետաքրքրվողների համար:

Վ. Գրիգորյան
բ.գ.դ., պրոֆ.